ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնական դրույթներ

- Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) անդամ ավելի ու ավելի շատ երկրներ են իրական շահառուների թափանցիկության ապահովման հանձնառություններ ստանձնում:
- Իրական շահառուների ոլորտում հանձնառությունները շատ հավակնոտ են, սակայն ուշադրություն է պետք դարձնել դրանց արդյունավետ իրականացմանը:
- Հաջորդ քայլը ներառում է օրենսդրական բացերի կարգավորումն ու ստուգման գործընթացների իրականացումը:

ԻՆՉՈ՞Ի Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Իրական շահառուների թափանցիկությունը ներդրվել է որպես փողերի լվացման և հարկերից խուսափելու դեմ պայքարի կարևոր գործիք: Ստվերային ընկերությունները հիմնականում օգտագործվում են շահույթը թաքցնելու, ահաբեկչություններ ֆինանսավորելու կամ անօրինական ճանապարհով ձեռք բերված գումարները թաքցնելու նպատակով: 1980-2020թթ. ընթացքում կոռուպցիոն ամենամեծ դեպքերի մոտ 70 տոկոսում ներգրավված են եղել անանուն ընկերությունները: Այնուամենայնիվ, դեռ բազմաթիվ երկրներում պարտադիր չէ շահառուի/ների բացահայտումը, ովքեր իրապես վերահսկում կամ շահույթ են ստանում բիզնեսից:

ՍՏԱՏՈՒՍ-ՔՎՈ

Համաձայն 2020թ. Ֆինանսական գաղտնիության ինդեքսի վերլուծության.

→ **խնդիրը կանոնակարգերի բացակայությունն է:** ԲԿԳ անդամ երկրների կեսից ավելին չեն պահանջում իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության հայտարարագրում, առավել ևս՝ հանրայնացում:

→ **Քչերն են հրապարակում համապարփակ տվյալներ.** ԲԿԳ անդամներից միայն մի քանիսը՝ Դանիան, Ուկրաինան և Միացյալ Թագավորությունն են առցանց տեղադրում իրական շահառուների տվյալները:

Բաց կառավարման գործընկերություն ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

ԲԿԳ անդամները պարտավոր են առավել հաճախ հանրայնացնել իրական շահառուներին իրենց գործողությունների պլանում (պատկերը՝ ստորև): Հետևաբար, իրական շահառուների թափանցիկության ապահովումը ԲԿԳ գործողությունների ամենաարագ զարգացող ոլորտներից մեկն է: Ընդհանուր առմամբ, ԲԿԳ հիմնադրումից ի վեր (2011թ.) անդամ երկրների մեկ երրորդն իրական շահառուների բացահայտման 52 հանձնառություն է ստանձնել: Ներկայումս վերոհիշյալ անդամներից 18-ն իրենց 2019 կամ 2020 թվականների գործողությունների ծրագրերում ներառել են իրական շահառուների բացահայտման հանձնառություններ:



ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԲԿԳ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

→ Օրենսդրական փոփոխությունների մշակում՝ իրական շահառուների գրանցում ապահովելու համար

→ Հանրային ռեգիստրների ստեղծում՝ մասնավորապես արդյունահանման ոլորտում

→ Միջոլորտային ռեգիստների ստեղծում

→ Համագործակցություն ՔՀԿ-ների, տեխնոլոգների և լրագրողների հետ՝ ռեգիստրների մշակման և տեղեկատվության ստուգման նպատակով:

ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ

Ներկայացվող առաջարկություններն ամփոփում են ԲԿԳ անդամների կողմից իրականացվող հիմնական գործառույթները.

Իրավական հենք

→ Իրական շահառուների մասին տեղեկատվության հավաքագրումը պարտավորեցնող օրենսդրական հիմք և/կամ կանոնակարգեր ներդնել:

→ Կանոնակարգել բացերը՝ օրինակ իջեցնելով սեփականության շեմը և ընդլայնել տեղեկատվության հավաքագրման հնարավորությունը տարբեր գործիքների միջոցով:

Հանրային ռեգիստր

→ Աշխատել քաղաքացիական հասարակության հետ՝ օգտակար և կիրառելի ռեգիստր ստեղծելու համար:

→ Տեղեկատվության բացահայտում բարձր ռիսկ պարունակող՝ պայմանագրերի կնքման և հանքարդյունաբերության ոլորտներում:

→ Ապահովել, որ ռեգիստրը լինի հանրությանը հասանելի, առցանց, անվճար և կանոնավոր թարմացվող:

→ Ապահովել տարբեր ոլորտների միջև փոխգործակցությունն ու իրավաազորությունը՝ հիմնվելով միջազգային չափորոշիչների վրա:

Վերահսկողություն և մշտադիտարկում

→ Ստեղծել վերահսկման գործուն համակարգ՝ ճշգրիտ և բարձրորակ տվյալներ ապահովելու համար:

→ Ներգրավել քաղաքացիներին մշտադիտարկման գործընթացում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական հաշվետվողականության միջոցով:

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ՇՈՇԱՓԵԼԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆ. Իրական շահառուների ռեգիստրի ստեղծում (2018)

2020 թվականի ապրիլին Հայաստանը փորձնական գործարկեց իրական շահառուների հայտարարագրման գործընթացը հանքարդյունաբերության ոլորտում՝ հաշվի առնելով, որ ոլորտը տարվա կտրվածքով ապահովում է պետական եկամուտների շուրջ յոթ տոկոսը: 2021 թվականի ապրիլին, Հայաստանը օրենք ընդունեց, համաձայն որի բոլոր ընկերություններից պահանջվում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնել հանրային ռեգիստրում:

ՆԻԳԵՐԻԱ. Իրական շահառուների վերաբերյալ օրենքի ընդունում (2017, 2019)

2017 թվականին Նիգերիան պարտավորվել է հավաքագրել և բացահայտել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը արդյունահանման ոլորտում: Առանց համապատասխան օրենսդրական նորմերի ընդունման, շրջանառության մեջ է դրվել արդյունահանման ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող կայք: Բարեբախտաբար, 2019 թվականին Նիգերիան հանձնառեց օրինական պահանջ ներկայացնել իրական շահառուների տվյալների հավաքագրման և դրանք միջազգային չափորոշիչներին համապատասխան բաց ռեգիստրում գրանցելու համար: 2020 թվականի օգոստոսին Նիգերիայի նախագահ Մուհամմադ Բուհարին ստորագրել է իրական շահառուների գրանցման կարգը:

ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. Իրական շահառուների շրջանակի ընդլայնում (2019)

Սլովակիայի Հանրապետությունը հիմնվում է նախկինում իրենց կողմից իրականացված իրական շահառուների հավաքագրման բարեփոխումների վրա, քանի որ առաջին երկիրն է, որը պարտավորվել է ամբողջությամբ իրականացնել իրական շահառուների թափանցիկության բացահայտման սկզբունքները: Գործընթացը ներառում է իրական շահառուների հետ կապված դրույթներում ազգային կանոնակարգերի փոփոխում և տեղեկատվության բացահայտման շրջանակի ընդլայնում:

ՄԵՔՍԻԿԱ. Իրական շահառուների ծրագրի համատեղ մշակում (2019)

Քաղաքացիական հասարակությունը և կառավարությունը համագործակցում են հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների սեփականության իրական տերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հանձնառություն ենթադրող փորձնական ծրագրի նախագծման շուրջ: Սա իրական շահառուների բաց ռեգիստրի ստեղծման առաջին քայլն է և կնպաստի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) չափորոշիչների և թիրախային խմբի ֆինանսական գործողությունների առաջարկությունների կիրառմանը:

ՈՒԿՐԱԻՆԱ. Իրական շահառուների տվյալների աուդիտ (2020)

Հիմնվելով արդեն իրականացված բարեփոխումների վրա՝ Ուկրաինան ներդնում է պետական ռեգիստի անկախ աուդիտի համակարգ՝ որպես առաջին քայլ իրական շահառուների տվյալների ստուգման միասնական մոտեցում ստեղծելու համար:

ԱՀՄ ԱՍՓՈՓ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բաց կառավարման գործընկերության տվյալների անկախ հաշվետվության մեխանիզմի (ԲԿԳ ԱՀՄ) համաձայն, իրական շահառուների հանձնառություններն ավելի հավակնոտ են, քան ԲԿԳ մյուս հանձնառությունները, սակայն արդյունքները նախնական փուլում շոշափելի չեն լինում:

Հանձնառությունների կատարողական



Հավակնոտություն - Հավակնոտ են համարվում այն հանձնառությունները, որոնք ԲԿԳ ԱՀՄ համոզմամբ ամբողջապես կյանքի կոչման պարագայում իրական փոփոխությունների կհանգեցնեն:

Վաղ արդյունքներ- Վաղ փուլում նախնական խոստումնալից արդյունքները փաստում են, որ կիրառվող հանձնառություններն իրական ազդեցություն են ունեցել կառավարության բաց լինելու հարցում: